

ԵՐԵՎԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐ 21

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի: Կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ ն Ն 253.

Մտքագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէրց).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
Իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է լ է Ք օ ն Ն 253.

Հ Ի Մ Ե Ղ Ե Ի Բ Գ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Բ Ա Յ Վ Ա Ս Ե Ի Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1905 ԹԻԱԿԱՆԻՆ
(33-րդ ՏԱԻԻ)

«ՄՇԱԿ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերէրց:
ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՆԸ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյն-
պէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռուբլի, եօթ և վեց
ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու
ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի:
Կայսրութեան ուրիշ քաղաքներէրց «ՄՇԱԿ» գրվելու համար և առհասարակ նամակներ
և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտնի հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ»,
Իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal «MSCHAK».

Օլլա Միխայլովնա Անանեան ծանուցանում է զազգայններին և ծանօթներին իր
ածուանու՝ բժշկականութեան դոկտօր
ԱՍԵՓԱՆ ՅՈՎԱԿԻՄԻԱՆ ԱՆԱՆԵԱՆԻ
ժամկան մասին, որ տեղի ունեցաւ ներկայ դեկտեմբերի լոյս 20-ի գիշերը: Թաղման
մասին կը յայտարարվի առանձին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Մտքագրութեան կողմէրց.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Բժշկագետ Անանեան. Պրօֆէսոր Սկիւ-
ֆասով սկիւ. Բագուի գործադուր. Թատրոն և
Կրթութեան Կայսրութեան Կայսրութեան Բազ-
ուում. Բաց նամակ Կայսրութեան հայ գաղութ-
իւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Պատերազմի շուրջը. Մակեդոնիայում.—ՀՆՈՒ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Երբ խնդրել էինք մեր բաժանորդներին
ընդ շտապել յայտնելու իրանց հասցէ-
նքը, որպէս զի մենք կարող լինենք
ապագայի վաղօրոք այդ հասցէները և
չընդհատել լրագրի առաքումը:
Դժբաղդաբար այս տարի կրկնվեց նոյնը,
ինչ որ տեղի էր ունեցել անցեալ տարի-
ներում: Միայն այժմ, երբ շատ քիչ օրեր
են մնացել մինչև նոր տարին, սկսվել են
ստացվել պատասխան ծանուցազրեր մեծ
քանակութեամբ: Մենք, անկասկած, կաշ-
խատենք ամեն միջոց գործ դնելու, որպէս
զի կարող լինենք լրագրի ուղարկելը բա-
ւարար կերպով կարգաւորելու: Բայց
անհրաժեշտ ենք համարում նորից յիշեց-
նել մեր 1905 թուի բաժանորդներին
հասցէները վաղօրոք մեզ ուղարկելու
մասին և խնդրել, որ նրանք հնարաւո-
րութիւն տան խմբագրութեանը գոնէ
յուշմուրթի սկզբին ունենալ բաժանորդներ
լրակատար ցուցակը:
Իրանք բաժանորդները պէտք է առան-
ձին ուշադրութիւն դարձնեն մեր մատ-
նացոյց արած հանգամանքի վրա, որով-
հետև լրագրի վաղաժամ ստանալը նախ
և առաջ կարևոր է բաժանորդներին հա-
մար: Մտքագրութիւնը, որ ամեն կերպ
աշխատում է լրագրի առաքման առիթով
թիւրիմացութիւններին առաջն առնել,
ցանկանում է, որ խմբագրութեանը ա-
շխատելիս իրանք բաժանորդները:
Յաճախ դիմում են մեզ զանազան
անձինք, խնդրելով, որ մենք նրանց
բաժանորդ գրենք ամսի մէջ իր և է
օրից, օրինակ այս տարվայ դեկտեմ-
բերի 10-ից մինչև հետեւեալ տար-
վայ ապրիլի 10-ը, յուլիսի 10-ը, կամ
սեպտեմբերի 10-ը և այլն: Անհրաժեշտ
ենք համարում յայտնել, որ բաժանորդա-
գրութիւն մենք ընդունում ենք ամսի
1-ից: Եւ իւրաքանչիւր տարվայ հաշիւ
պահում ենք առանձին: Պէտք է նկատել,

որ պատրվ վերցնում է իր վճարները
տարով կամ լրակատար ամիսներով: Եւ
մենք հատուցանում ենք պատրիս տարե-
կան բաժանորդներին համար սահմանված
վճարը դեկտեմբերի 31-ին, իսկ ամսավը-
նարները ամսի սկզբին:
Մի քանի հիմնարկութիւններ գիտնի են
մեզ խնդրելով, որ նրանց ուղարկենք լր-
ագրի ձրիաբար: Մենք անկասկած կօչ-
տվենք նուիրատուութիւններից բաւարար-
ութիւն տալու խնդրողներին, բայց և
մեր կողմից, անցեալ տարիները օրինա-
կով, մի քանի բարեգործական հիմնարկու-
թիւնների, գրող օրհաններ, գրողների,
ուսանողական ընթերցարանների կուղար-
կենք ձրիաբար լրագրի օրինակներ: Բայց
ցանկալի է, որ այդ հիմնարկութիւնները
գոնէ վերցնեն իրանց վրա այն, որ խմբա-
գրութիւնը կանխելիս իր դրամարկղից,
տալիս է պատրիս իրեն ճանապարհա-
ծախք, այն է տարեկան 1 ռ. 80 կոպեկ
իւրաքանչիւր օրինակի համար:
Այն նուիրատուութիւնների մասին, ո-
րոնք կը լինեն լրագրի ձրիաբար ուղար-
կելու համար այս կամ այն հիմնարկու-
թեան, մենք կը տանք հաշիւ լրագրի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
Բժշկական Ս. ԱՆԱՆԵԱՆ
Թիֆլիսում, կիրակի, դեկտեմբերի 19-ին,
կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճան-
վեց բժշկագետ Ս. Անանեան, որ Թիֆլիսի
աչքի ընկնող գործողներից մէկն էր:
Անանեան եռանդուն գործող էր թէ կրկնա-
սեան բժշկական ընկերութեան մէջ, թէ ման-
կաբարձական ինստիտուտում և թէ Թիֆլիսի
ինքնավարութեան խորհրդարանի մէջ:
Բժշկական ընկերութեան մէջ նա վերջին
տարիներում վարում էր նախագահի պաշտօն
և անցեալ տարի նրա նախագահութեան օրով
բացվեց Թիֆլիսում հակաթրաքսայի ցու-
ցահանդէս: Մանկաբարձական ինստիտուտում,
որի հիմնարկութեան ամենագլխաւոր նպաս-
տողներից մէկն էր, նա երկար տարիներ կար-
գում էր դասախոսութիւններ մանկաբարձու-
թիւնից: Թիֆլիսի դուստրի մէջ նա յայտնի էր
իրեն քաղաքի գործերին և շահերին շնորհ
պաշտպան մի անձնավարութիւն:
Անանեան լաւ գիտէր հայերէն և երկար
տարիներ գործել է հայկական հիմնարկու-
թիւններում, օրինակ, Անանեան և Ներսիսեան
պարոնցում: հոգաբարձուի կրօնումով: Անանեան

հետևում էր հայկական մամուլին և շնորհ
պաշտպան էր հայերէն լիզուով հանրամատչելի
բժշկական գրքեր հրատարակելու գաղափարին:
Անանեան դեռ առողջ մարդ էր և կարող էր
գործել երկար տարիներ: Նա հիւանդացա-
ւա միայն մի քանի օր: Բայց հիւանդութիւնը ե-
րաւ ճակատագրական: Թիֆլիսը զբոսից իր լաւ
բաղաճացիներից մէկից:
ՊՐՕՖԷՍՐ ՍԿԻՒՖԱՍՕՎՍԿԻ
Ռուսաց գիտնական և մասնաւորապէս բը-
ժշկական աշխարհը այս օրերս մի ծանր կո-
րուստ ունեցաւ. մեռաւ պրօֆէսոր Նիկոլայ
Վասիլեւիչ Սկիւֆասովսկին, հռչակաւոր խի-
բորդ և աւաջներ Ռուսաստանում յայտնի
նասարակական-բժշկական գործիչ, մի մարդ,
որ ամբողջ իր կեանքը նուիրել էր ճշմարտու-
թեան, գիտութեան և տանջող մարդկութեան
ձառաջութեան, մի ուսուցիչ, որի ձեռքի տակ
պատրաստվել են, ի թիւս այլոց, և բազմա-
թիւ հայ բժիշկներ:
Սկիւֆասովսկին աւարտել էր իր ուսումը
Մոսկուայի համալսարանի բժշկական ֆակուլ-
տետում 1859 ին և հէնց իր բժշկութեան ա-
ռաջին օրից նա ընտրեց իբրև մանագիտու-
թիւն վերաբուժութիւնը (խիւրուրգիա), որի
մէջ և մեծ հռչակ ստացաւ: Բայց նա չը բա-
ւականացաւ միայն գործնական գործունէու-
թեամբ, այլ անձնատուր եղաւ նաև գիտնա-
կան, ուսուցչական գործունէութեան և դրա
համար նա աշխատեց ոչ միայն Ռուսաստա-
նում, այլ և արտասահմանի լաւագոյն կլինիկ-
ներում և ինստիտուտներում ու պրօֆէսոր
Վերսովի մօտ: Եւ իբրև վերաբուժ, իբրև բժիշկ
իրեն գիտնական և հասարակական գործիչ նա
ունեցաւ վերին աստիճանի բեղմնաւոր գոր-
ծունէութիւն և այդ պատճառով Ռուսաստանի
գիտնական աշխարհը և ինտելիգենտ հասա-
րակութիւնը 1895 ին տօնեց նրա պրօֆէսու-
րական գործունէութեան 25 ամեակը և 1899 ին
նրա բժշկական գործունէութեան 40-ամեակը
վերին աստիճանի շքեղ, հանդիսաւոր և սքա-
րուկ կերպով: Իբրև գիտնական, նա մեծ
համբաւ էր վայելում և Եւրոպայում ու բազ-
մաթիւ արտասահմանեան բժշկական ընկի-
րութիւնների պատուաւոր անդամ էր:

ԲԱԳՈՒԻ ԳՈՐԾԱԳՈՒՐԸ
(«Навразъ» պատօճական լրագրից)
Երկուշաբթի օրը, դեկտեմբերի 13-ին, առա-
ւօտեան ժամը 6-ին Բագուի նաւթաշրջանում
սկսվեց բանտրների գործադուր: Բանտրները,
փչացնելով Բագու-Բալխանի հեռախօսի գը-
ծիքը, դադարեցրին հեռախօսային հաղորդակ-
ցութիւնը, իսկ «Կասպիական» Չերնօծօրեան
նաւթահանքում փչացրին այն մեքենաները,
որոնք ծառայում են տները տաքացնելու հա-
մար: Իբրև-Նէյրաթի նաւթահանքերում նոյն-
պէս սկսվեց գործադուր. այդտեղ բանտրները
հեռացան, բաց թողնելով բոլոր կաթիւներից
շոգիները: Չը նայելով անմիջապէս ձեռք ա-
ռած միջոցներին, հետեւեալ օրերը գործա-
դուր սկսեց դարձանալ և ներկայումս տա-
րածված է ամեն տեղ թէ նաւթադաշտում և
թէ Բագու քաղաքում: Լրագրիները դադարե-
ցին լոյս տեսնելուց, շատերը չեն գործում,
ձիւքարը շարժումը դադարել է:
Բալխանի բանտրների խմբերը գնում են
նաւթահանքերն ու գործարանները և պահան-
ջում, որ աշխատանքները դադարեցնեն. կաթ-
աններից շոգին բաց են թողնում: Բայց երբ
նստրկանութիւնը կամ զինուորական պահակ-
ները մօտենում են, բանտրներն արագու-
թեամբ ցրվում, անհետանում են:
Մինչև այժմ գործադուր անողների և ու-
սակաւորութեան կամ զօրքերի միջև առանձին
ընդհարումներ չեն եղել. միայն մի գործադուրի
վերաբուժում ծախել են ատրճանակի մի հա-
րուածով:
Վերջին օրերի ընթացքում գործադուրը
տարածվել է «Արևելեան Ընկերութեան» և

«Նադեժդայի» արհեստանոցներում: Դեկտեմ-
բերի 17-ին, ուրբաթ օրը, դադարեցին գոր-
ծելուց և Միլրդարէլիանի ծխախոտի գործա-
րանի, «Կապիական-Միլրդարի» շոգեհատային ըն-
կերութեան արհեստանոցների և Դադաշվի
նաւթաւառոյցի բանտրները: Այդ վերջինում
գործադուր արած բանտրները ֆուսել են մի
քանի սեքենաներ, իսկ «Կապիական-Միլրդարի»
հայաթի մեծ դռներն են կոտրատել: Չնոք
առնված միջոցներով ցրվեցին խառնակութիւն
առաջացնող բանտրներին, իսկ մի մասին էլ
ձերբակալեցին, մինչև որ իմացվի նրանց մե-
ղաւորութեան չափը:
Իբրև-Նէյրաթի և Բալխանի գործադուր
անողները ժողովներ արին. վերջին ժողովին
մասնակցում էին 30000 հոգի, որոնք սկսեցին
խմբերով Բալխանի վերադառնալ, երբ ու-
ստիկանութիւնը մօտեցաւ, և, տեսնելով մօտով
անցնող գնացքը, բարերով վշտեցին վազու-
ների լուսամուտնը:
Դեկտեմբերի 17-ին Բագուի լրագրիները
նորից լոյս տեսան:
Ժողովին մասնակցող ձերբակալված բան-
տրներից, յանցանքները պարզելուց յետոյ,
բանտարկվեցին 14 հոգի զանազան ժամանա-
կով:
ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱՃՏՈՒԹԻՒՆ
(Հայունեաց ընկերութեան երկուշաբթի-Արմենիանի ներ-
կայացումները Կարսում):
1
Թիֆլիսի Հայունեաց ընկերութեան երե-
կուշաբթի, որ տեղի ունեցաւ կիրակի, դեկտեմ-
բերի 19-ին, գրաւել էր մեծ բազմութիւն դէ-
պի Թիֆլիսի ժողովարանը: Երկուշաբթի սկսվեց
կօնցերտով և վերջացաւ ներգրեթէ պարերով:
Կօնցերտային բաժնի նորութիւնը թիֆլիս-
ցիները համար տիկին Սվեթլանա Դօրախանյան
էր: Նա երգեց, բացի ծրագրում նշանակված
ներից, որոնք մասին մեր յիշատակի էինք
«Մշակի» մէջ, դարձեալ մի քանի երգեր, օ-
րինակ «Penso», և «Dans le printemps de
mes années». Երգչուհու ձայնը փայլուն, մե-
տախճան ձայնեղից չէ, բայց նա լաւ մը-
շակված է և որոշ ամպլուայի համար նա բը-
նորը և արասայտիւր է: Ամենից մեծ աշո-
ղութիւն ունեցաւ Կարմէնից վերցրած կտորը
«Havanera», որը հասարակութեան խնդրով
կրկնվեց: Այդ կտորի մէջ երգչուհին մոցրել
էր բնորոշ իմաստ, զգացմունք, սովորածնաւ
և երաժշտական արտայայտութիւն: Կարմէնի
երգը, որ ունի մի յայտնի աստիճան գնչուհու
երգի ազդեցութիւն, կրում էր համապատաս-
խան գունաւորութիւն: Սվեթլանա Դօրախան-
յան ձայնը թոյլ է ներքին աստիճաններում և
այդ պատճառով լաւ չէ լսվում այն երգերում,
ուր ձայնը պէտք է երկար ժամանակ հնչվի
ցածր նոտաների վրա:
Չուրախանյան վախելիկ նուագից «Սարա-
սատէի «Անդալուզիան» և Վենետիկում մի
«Պօլսոն»-ը: Վախելիկի Չուրախան Կարմէն
է շատ նուրբ ձայնի և ցոյց է տալիս նոր
կատարելագործութեան նշաններ:
Ս. Բարխուդարեան երգից իտալերէն «Vor-
rei morire» և հայերէն «Գուռն կրկն բալլա»,
«Անցաւ տարին», «Այդ իմ սոխակ»: Ամենից
շատ աշողութիւն ունեցաւ վերջին երգը:
Արմենիան արտասանեց մի քանի ոտանա-
ւոր՝ «Էլիթիստիկանի «Շղալայր ենք մենք»,
Չորանեանի «Կայսրիկ նուէր», «Լաւաւաւ»
և Փրանսերէնի Դօրէի և Հիւգօի հեղինակու-
թիւններից: Արմենիան արտասանութիւնը
մենք լսել ենք և ուրիշ անգամներ: Նա առ-
հասարակ լաւ արտասանող է, բայց մենք
անցեալներում չէինք հաշտվում նրա չափա-
զանց երգախառն և ձգձգված արտաբերու-
թեան հետ: Այժմ գործադուր պէտք է ար-
ձանագրենք, որ արտասանված ոտանաւորները
ազատ էին ախլին բնաւորութիւնից, աւելի
արտայայտիչ էին, իրական և ուժեղ:
Օրերը Ստախովա արտասանեց ուսերէն
մի քանի ոտանաւորներ: Նա լաւ է արտասա-
նում, խիստ շնորհողով, բայց ձայնը լաւ չէր

լովում, ուստի դժգոհ ձեռնարկն մասը չը
լսեց նրա ասածները:

Բոլոր մասնակցողները արժանացան բուն
ձափանառութիւններին:

Երկրորդ երկրորդ մասը, որ պարունակում
էր իր մէջ Տարանտուլա ունգարական և Կե-
կոսով պարեզը, մանր, ինչպէս և հանդիսա-
կաններին մեծագոյն մասը, չը կարողացանք
տեսնել, որովհետև պէտք է աթոռներ վրա
բարձրանայինք, ինչպէս արել էին մի քանի
տարբերակ անձինք: Այդ մասը պէտք էր ա-
ւելի աշող կերպով կազմակերպել, յարմար-
ութիւններ տալով հանդիսականներին:

Միւրոյ

II

Արմէնեան ամուսինները կարծում ծրագրել
են մի շարք ներկայացումներ: Ուրբաթ, ղեկ-
տեւերին 17 ին, նրանք ներկայացրել են
«Դառնողի սուր» և «Համբոյր» պիեսները:
Հասարակութիւնը վերաբերվել է համակրու-
թեամբ և լցվել թատրոնը: Առաջիկայ շաբաթ
օր, ղեկտեւերին 25 ին, սիրողները հետ միա-
սին, նրանք պէտք է տան Շիրվանզագէի
«Եղբայր» պիեսը, ղեկտեւերին 31-ին նեմի-
րովի Դանչնիօի «Տեսարան», իսկ յունվարի
2 ին պէտք է կազմեն ցերեկային:

ՀԱՅՈՑ ՆԵՐԿՍՅԱՅՈՒՄՆԵՐԸ ԲԱՅԻՒՈՒՄ
(Նամակ Բազուկեց)

Դեկտեմբերի 14 ին, ի նպատակ Աղայեանի,
ներկայացուցեց «Մաֆո» ուրբերգութիւնը, 5
գործ, Գրիգորեանի, թարգ. Աստուածաբան-
նի: Ողբերգութեան նրբի յորդակացը վերց-
րել է այն հին յունական պատմութեանը, որ
ժամօթ է ամեն մի աշակերտի: Անա այդ
պատմութեանը, հանձարեղ և ղեկեցողութիւն յու-
նական բանաստեղծութեան Մաֆոն, կեանքի մէջ
չը գտնելով իսկական սէր և խաղած լինելով
իր սիրոյ մէջ, վերջ է տալիս իր կեանքին,
զորովելով ժողովրդի անդունդը: Գրիգորե-
անի «Մաֆոն» մի շատ ղեկեցողի և ղեկա-
րուստական բնական գրութեան է և չը նա-
յած, որ անցել է մօտ 80—85 տարի նրա լոյս
աշխարհ եկած օրէն, այնուամենայն այդ
ողբերգութեանը ղեկ ազդում է հանդիսականի
վրա: Իրաւոր գործող անձինք ընդամենը
երեք են. Ինքը Մաֆոն, նրա սիրական ծածուկ
և Մաֆոի սարկուհի՝ Միլիտանա: Ամբողջ
ողբերգութեան կենտրոնը կազմում է, ի նախկին,
Մաֆոն իր խաղած սիրոյ տանջանքներով, իր
վրիժաբու և կրակոտ ստեղծելով և վերջապէս
այն կանացի վեհաճանութեամբ, որից առաջ է
գալիս ներուժի մասին և Միլիտանայի համար:
Մաֆոն օլիմպիական խաղերից յետոյ վերա-
դառնում է իր բնակավայրը, պակված դափ-
նեայ պատվով, իբրև սքանչելի և ամենամեծ
բանաստեղծութեան հին դարերի. նրան ուղեկ-
ցում է ծածուկ, մի անյայտ երիտասարդ, որին
Մաֆոն պատանդելով խաղերի ժամանակ առա-
ջին անգամ սիրել է. ինքը ծածուկ տեսնելով
պատկով զարգարված Մաֆոն, որին երկրպա-
գում էր ամբողջ և լազան, նոյնպէս վառվել էր
սիրոյ կայծով ղեկի այդ մեծ կինը: Եւ ահա
Մաֆոն ծածուկ հետ վերադառնում են իրանց
բնակավայրը և այստեղ Մաֆոն ստորեայ կեան-
քում համոզվում էր, որ ծածուկ սիրել է իրան
ոչ իբրև կնոջ, այլ իբրև մի հոգեկալար բա-
նաստեղծութեան. այդ համոզմունքը Մաֆոյ մէջ
աւելի ևս հաստատում է, երբ նա պատահո-
րէն իմանում է, որ ծածուկ և սարկուհի ղեկե-
ցիկ Միլիտանան սիրում են իրար: Մաֆոն
խանդից ուզում է սկզբում հաշտել սիրահար-
ներին, բայց յետոյ նրա ներքին հոգեկան
կեանքի մէջ զարթում են նորից մարդկային
ամենալաւ զգացումները: Մաֆոն վերանայն
ներում է ծածուկի և Միլիտանայի, իսկ ինքը,
ոչ չը գտնելով իր մէջ տանել խորտակված
սիրոյ տանջանքները, գործում է ամենապա-
տու թիւն:

Մաֆոն դերը կատարում էր տ. Սիրանոյ և
ի հարկէ տաղանդաւոր ղեկաստեղծութիւն
տանջանքների աննաման տեսարաններ Ալա-
յանի ծածուկ դերում վատ չէր, թէ և կարելի
էր սպասել նրանից աւելի զգացված լինող
Բենիֆիցիանային ծափահարիցի մի քանի ան-
գամ և մատուցին մի քանի թանկագին իրեր:
Ծառ լաւ էր և օր Բնարիկ՝ Միլիտանայի դե-
րում: Թատրոնում հասարակութիւն այնքան էլ
չը կար:

Այլ. Առաքելեան

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԿԻՍՏՈՎՈՂՄԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կարդացինք «Մշակ» լրագրի
№ 276 ում տպագրված պ. Իրաւորի Կիսթո-
վոզակից ղեկտեւերի 6-ից գրած նամակը:

Միտնգամայն հասնում լինելով պ. Իրաւորի
նետ, որ Կիսթոլոզակից ղեկեցի կատուցա-
նելու հարցի վրա լայն հայեացքով պիտի նա-
յի, և պիտի աշխատի որքան կարելի է շքեղ
և պայծառ կեղեցի կատուցանել—բուն հին
հայկական ճարտարագիտութեամբ, մենք կա-
ռակարէինք կոնկրետ նշանակ լ, որպէս զի
ցանկացող բոլոր թէ հայ և թէ այլազգի ճար-
տարագետները հնարաւորութիւն ունենային
մրցան մասնակցել: Բարի և համակրելի է
ճարտարագետ պ. Էմ. Պօշայեանի ցանկա-
թիւնը և խոստումը ճարտար նկարել կեղե-
ցու մակարդակը, բայց այնուամենայնիւ նա
չէ կարող չը համաձայնել մեզ հետ, որ փոր-
ձառութիւնը աւելի նպատակայարար է գրա-
նում այդպիսի ղեկեցում «Կոնկրետ» դիմել,
այն էլ նշանակելով վարձատրութիւն առաջին
երկու, կամ երեք ընտրված պրոէկտների հա-
մար:

Ի բոլոր սրտէ ետանգ և աշողութիւն ենք
ցանկանում Կիսթոլոզակի հայ գաղութին:

Ինձեանք-տէխնիզով՝ Յովհ. Ամիրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻՐ

Կովկասի կառավարչապետի ժամանակաւոր
պաշտօնակատար Մալաւան ղեկտեւերի 17 ին
հաստատել է Գանձակի ժամանակաւոր ղեկու-
սական դատարանի վճիռը փոխ-նահանգապետ
Անրէշեւի պատուօթեան գործի մէջ մեղադր-
վող 3 անձերի վերաբերութեամբ, անելով հե-
տեան փոփոխութիւնները. դատարանի վճի-
ռում մասկան պատիժը Գրիգոր Լուկասեանի
համար դարձրել է անորոշ ժամանակով տա-
ժանակիր աշխատանք, Սիմէոն Պարաշեանի
անորոշ ժամանակով տաժանակիր աշխատանքը
դարձրել է 20 տարով միայն, իսկ Յովհաննէս
Պարաշեանի արգարացումը հաստատել է նոյ-
նութեամբ:

Այցեալ անգամ մենք հաղորդել էինք, որ
Թիֆլիսի քաղաքապետն պ. Վերիշեանը դի-
մել էր նահանգապետին և խնդրել, որ առանց
օրէնքի որոշած 15 օրեայ ժամանակախիջոյցի
Թոյլատրվի քաղաքային ինքնավարութեանը
մասնակցելու քաղաքագրութեան համառուսա-
կան համաժողովին: Այժմ պ. նահանգապետը
յայտնել է, որ այդ 15 օրեայ ժամանակը արը-
ված է միայն այն որոշումների հաստատութեան
համար, որոնք կախված են լոկ նահանգա-
պետներից և չեն պահանջում աւելի բարձր
վարչութեան թոյլտուութիւն կամ հաստատու-
թիւն, իսկ այդ խնդրը, կարելի ունենալով
բարձր հաստատութեան, ուղարկվում է պատ-
շաճաւոր վարչութեան բարեհայեցողութեանը
օրէնքի որոշած կարգով:

Թիֆլիսի պատ-հեռագրական վարչութիւնը
հրաման է ստացել այսուհետև ամեն մի հե-
ռագրից 15 կօպէկ աւելի վերցվող գումարի
փոխարէն ամեն 20 կօպէկ: Ամեն մի հեռա-
գրի վրա աւելացած 5 կօպէկ վճարը մտնելու
է Կարմիր Սաշի գանձարանը:

Թիֆլիսի ուղարկման ներկայացրել էր
1,583,141 ռ. ծախքի նախահաշիւ 1905 թւի
համար, իսկ գումարի ֆինանսական յանձնա-
ժողովը կը ձեռնարկ այդ գումարը՝ յատկացրել
է բոլոր ծախքերի համար 1,482,032 ռ.:

Պետերբուրգում ղեկտեւերի 14-ին տօնել
են հուլիանոր ուսու փաստարան Ն. Պ. Կա-
բալակովի Երաւարանական գործունէութեան
25 ամեակի օրակերտներ: Պետերբուրգի Երաւա-
րանների դասարանը ներկայացրել է յոթե-
ւեանի մի շատ զգացված և ղեկողոված ու-
ղերձ: Կովկասի բնակիչներին և մասնաւորա-
պէս հայերին համար էլ անյայտ և անձանօթ
անձնաւարութիւն չէ պ. Կարաբչկովիսին իբրև
գանազան արգարացի դատեր պաշտպանող:
Յիշենք միայն հետեւեալ ղեկեցող: 1899-ին Սիմ-
ֆիլոսոֆ քաղաքում էր գործում շրջակայքից ե-
կած մի գաղթական երիտասարդ սպանում է
Յոյն դժբաղդ երկրից եկած մի քրուր վաշ-
խառու աւազակի: Սպանողը գտնւում անձնա-
տուր է լինում: Գործը յանձնվում է երգուեսլ-
ների դատարանին: Անա այդ ժամանակ պ.
Կարաբչկովիսին, զգալով կատարված իրողու-
թեան ամբողջ հոգեբանութիւնը, իր կրակոտ
պաշտպանութեամբ արգարացրեց և ազատեց
մեղադրվածին:

«Մշակ» մէջ հաղորդւած այն լուրի առի-
թով, թէ Բագուում բնակվող շուշեցիները կա-
մեցել են հանդուցեալ Սոբէն բանասէր Միր-
զաբեգեանի տեղ Շուշուց մի բանասէր բերել

տալ, մենք ստացանք հետեւեալ նկատու-
թիւնը, որ հարկ ենք համարում տպել խնդրը
պարզիւր համար. «Մենք շուշեցիներս՝ օրինա-
կանապէս և բարոյապէս պարտաւոր ենք այդ
անելու. չէ՞ որ շուշեցիները մեծամասնութիւնը
գաղթել է Բագու, և էլի շարունակ գաղթում
են: Միթէ խղճի և օրէնքի հակառակ բան
են քնում շուշեցիները, որ իրանց բանասէ-
րերից մէկին կամ միւսին բերում են իրանց հե-
զուր պէտքերը կատարելու. չէ՞ որ իրանք են
այդ բանասէրներին ձեռնադրել տուել և իրանք
էլ պարտաւոր են նրանց համար մտածել. ա-
ւելի լաւ չէ՞ իրանց ծանօթ և ծխական բանա-
նանքից ունենալ, քան անձանօթի նոր բնա-
րութիւն անել. աւելի մեծ արդարութիւն չէ
իրանց փոքր և այժմ համարեա՞ թէ կրտա-
դարակ Շուշի քաղաքի բազմութիւ խղճ բա-
նասէրից փոխադրել Բագու և մնացածների
վիճակը մասամբ բարւոյել տալ, քան հետեւից
քարասրտութեամբ դիտել նրանց թշուառ վի-
ճակը»:

Ներքին գործերի մինիստրութիւնը սեպ
տեմբերի 3-ին հաստատել է Թիֆլիսում ապրող
աղքատ պարսկահպատակներին օգնելու ընկե-
րութեան կանոնադրութիւնը:

«Ե. Ա.» լրագիրը յայտնում է, որ ղեկտեւ-
երի 15 ին Բագուի բորսայի դրութիւնն ան-
որոշ էր, ընդհանուր գործադուլի պատճառով.
կատարվել են միայն մի երկու առուձախի
գործողութիւններ: Դեկտեմբերի 17-ին բորսան
բոլորովին բայջայված և անորոշ վիճակի էր,
որովհետև ընդհանուր գործադուլը շարունակ-
վում էր և նրա հետեւեալը դեռ չափազանց
անորոշ է. այդ պատճառով անհնար է կրքել
որ և է պարտաւորութիւն որոշ ժամանակի
համար, դրա համար էլ աւելի յարմար են հա-
մարում սպասել ղեկեցրի արդիւնքին: 17-ին
բորսայում ոչ մի գործողութիւն չէ կատարվել:

Տեղական «Է. Օ.» լրագիրը հաղորդում է,
որ Թիֆլիսի Հայոց Իրաւաստիական ընկերու-
թիւնը բանակցութիւններ է սկսել Պարզուով
աղբուրթիւն ունեցած երիտասարդ հայ դերա-
սան Մարտուտեանի հետ Թիֆլիսի դրամա-
համար: Վատ չէր լինի, եթէ Իրաւաստիական
ընկերութիւնն այդպիսի բան անէր, բայց
հաստատ աղբուրթից դիտեմք, որ այդպիսի բան
չը կայ:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստ-
րութիւնը, ինչպէս հաստատում է «Պատկ. Մ.»
լրագիրը, զբաղված է ժողովրդական գրադա-
րանների գրքերի ցուցակները ընկելու հար-
ցով: Այժմ այդ ընտելութիւնը յանձնված է հո-
գեւոր վարչութեան, արգարաբատութեան, ֆի-
նանսների և ղեկուսական մինիստրութիւնների
ներկայացուցիչներից կազմված մի յանձնա-
ժողովի:

Մօսկվայի ուղարկման հրաւիրել էր վերջին
օրերն մի յանձնաժողով պրօֆէսոր Ն. Ա.
Կարիշեւի նախագահութեամբ, որը պէտք է
ընենք վիլեդնեան լաբորանում հանրակրթա-
կան ժողովրդական դասախօսութիւնների հար-
ցը: Այդ յանձնաժողովում քննվեց նրա ան-
գամ Ի. Ն. Սալարովի մանրամասն ղեկու-
ցումը այն հանգամանքների մասին, որոնց մէջ
գործը մեղանում գոյութիւն ունեցող օրէնք-
ներով և շրջաբերականներով: Յանձնաժողովը
միաձայն եկաւ հետեւեալ եզրակացութեան, որ
հաղորդվեց քաղաքային ուղարկվային. 1) Վիլեդնեան
ժողովրդական լաբորանում 1901
թւի օրէնքի թոյլատրված ձևով տարված ըն-
թերցանութիւնները չեն կարող տալ որ և է
օգտակար արդիւնք: 2) Ընթերցանութիւնները
պէտք է ունենան բացառաւոր հանրակրթա-
կան բնաւորութիւն, որին կարելի է հասնել
միմիայն նրանց սիստեմատիական և գիտական
դոյն տալով: 3) Ժողովրդական ընթերցանու-
թիւնների համար գոյութիւն ունեցող օրէնք-
ները պէտք է փոխել Մօսկվայի համար. պէտք
է ընթերցողներ հրաւիրվեն առանց թոյլտու-
թեան և կարգազննել, առանց բնագրի, կօս-
պէկտ, համառոտութիւն և այլն՝ կանխօրէն
ներկայացնելու և թոյլտուութիւն ստանա-
լու: (Բ. Յ.):

ՇՈՒՆՈՒՑ մեզ գրում են. «Ամսիս 13-ին
թեմիս առաջնորդը, քահանաների և մեծ թւով
հայերի հետ, գնացին տեղին միւսելիմաների
մեծ մզկիթը և այնտեղ իրանց ցաւակցութիւնը
յայտնեցին մօլլաների և թուրքերի ներկայու-
թեամբ Մուշէլի Մօլլա-Մահմադ Ծարաբանցու

մահվան առիթով: Սրբազան հայրը մի բանի
խօսեցով արտայայտեց իր և հայերի ցաւակ-
ցութիւնը սյւ մահվան առիթով: Այնուհետև
քահանաները երգեցին հոգեհանգստեան շարա-
կանը, որից յետոյ միմիայն արին մօլլաները
և իրանց շտորակալութիւնը յայտնեցին հայե-
րին: Դժբախտաբար առաջնորդը թուրքերէն
չիմանալով, հարկաւոր չէր համարել կարգա-
դրել թուրքերէն իմացող մի քահանայի խօ-
սելու, դիմելու մի աշխարհակա՛նի, կամ
վերջապէս խնդրելու մի այնպիսուն, որը
կարողանար կարգին թարգմանել իր ասած-
ները և վերջապէս, նա նեղութիւն չէր
կրել մի կարգին բառ պատրաստել ու
այդպիսով արտայայտել հայերի ցաւակցու-
թիւնը: Այդպիսի առիթներ չէ՞ որ շատ սակաւ
են պատահում: Ինչպէս, ուրեմն, չը օգտվել
նրանից և աւելի ընդարձակ կերպով պերճա-
խօս փաստերով չը խօսել համբարախօսեան,
եղբայրութեան մասին»:

ՆՈՒՆՈՒՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի
10-ի գիշերը, ուղիղ ժամը 12-ին, ինչպէս
պատմում են զիւղաքից, Դաշբուլայ գիւղում
յանկարծ լավ է երկնքում մի պայթիւն, որի
ձայնից ղանդում առաւորները սկսել են բա-
նալել, շնորհ հայել և տները շարժվել և
ժողովուրդը զարթնելով տեսել է երկնքը
պարզ, լուսաւորված լուսնի լուսով: Վերոյի-
շալ երկնքը նկատելի է եղել չորս գիւղերում,
այն էլ Դաշբուլայ, Չարդաթ, Սարաթուու հա-
յարնակ և Դաննա թրքաբանակ գիւղերում»:

ՏԿՎԻՐՈՒՄ մեզ գրում են. «Ամբողջ շա-
բաթ է այստեղ անընդհատ ձիւն է գալիս.
ձիւնի խողովակը առ այժմ հասնում է եր-
կու արշինի: «Нахичран» ընկերութեան գոր-
ծարանում ճանապարհները փակվել են մա-
սամբ ձիւնի և մասամբ էլ վերջինի ծանրու-
թիւնից գնաին տապալվող ծանրի պատճա-
ռով: Հեռախօսութիւնը կարաւոր է և քա-
րածի արտահանումը գիւղաբայցի է: Տեղա-
ցիներին այս զեպը յիշեցնում է 1896 թւի
սարսափելի ձիւնը, որի մասին հետեւեալ են
պատմում: Ամբողջ 16 օր գիշեր և ցերեկ ան-
ընդհատ ձիւն էր գալիս. ձիւնի խորութիւնը
հասնում էր 3 սաժնի: Վերոյիշալ գործա-
րանը ամբողջովին ձիւնի տակ ծածկված էր
մնացել, իսկ մենք ծանայորներս հուսովել
էինք մի շինութեան մէջ և ազատութեան
յոյաներս բոլորովին կարած, իւրաքանչիւրս
մեզ համար առանձին կտակ էինք գրել, թէ
մեծ որքան ենք պարտ, թէ որքան ստանալիք
ունենք և թէ արդեօք իւրս բանչիւրիս ունե-
ցած կայքի հետ մեր մահից յետոյ ինչպէս
պէտք է վարվին: Մթութեան պատճառով օր
ու գիշեր մեր ձրագները վառած էինք պա-
հում: Իւրաքանչիւրս յուսահատ ղեկերից ե-
րկում էր մեր վրովված աշխարհը—մտածում
էինք մեր սիրելիների մասին, որոնց թողի
եղել էինք այստեղ մի քանի կօպէկ աշխատե-
լու և նրանց պահելու համար, բայց անգութ
ճակատագիրը, անժամանակ, առանց թողնելու
վիլեդնեանիս բաժանման հրաժեշտ տալու,
ուզում էր վերջ տալ մեր կեանքին: Ամբողջ
երկու շաբաթ էր անցել, բայց ձիւնը դարձեալ
շարունակում էր գալ. վառելիքը և ուտելիքը
հասնելու վրա էր. ոչ մի տեղից օգնութեան
յոյս չը կար: Բանուրները վաղուց արդէն փա-
խել էին և մնացել էին միմիայն 25 հոգի, ո-
րոնց փորձեցինք ուղարկել գիւղից պաշտե-
րելու, բայց խղճերը, ամբողջ օրը չարաբ-
վելուց յետոյ, վերադարձան դատարկ գրպա-
ներով: Օգնութեան յոյաներս կտրած մարդ-
կանցից, աղօթում և սպասում էինք նախախ-
նամութեան ողորմութեանը: Կարծես թէ Աս-
տուած յուսում է մեր արթթը: 16-րդ օրը, երբ
բոլորովին վերջացել էր թէ ուտելիքը և թէ
վառելիքը ու մօտեցել էր կորելու ժամը, դա-
րարում է ձիւն գալ, պարզվում է երկնքը և
մի քիչ յետոյ տեղում է բարակ անձրեւ, որի
ազդեցութեան տակ սկսում է ձիւնը կամաց-
կամաց հալվել: Ձիւնը հալվելուց յետոյ ճա-
նապարհներին խեղդաման եղած 14 մարդ
գտանք և թողեցինք մեր սեփական միջոցնե-
րով»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԱԻԹԻՒՆ

ՊԼԱՏՎԱՅԻ ԳՈՒՎՋԷ

Բրեքնուսօր պատերազմի մասին: Միանդինա-
վան յայտնի բանաստեղծ Բրեքնուսօր երկու-
յոզեան է տպել ներկայ պատերազմի և հաշ-
տութեան միջնորդութեան հարցերի առիթով:
Առաջին յօդուածը, որ տպված է «Cour. Eur.»
թերթի մէջ, պարունակում է հետեւեալը:

«Ռուսաստանի տիրապետութիւնը—ասում է նա—Հեռուոր Արեւելքի ծովերի վրա, երկար, եթէ ոչ ընդ միջոց, կորած է: Իրան՝ Ռուսաստանի մէջ միայն գոսացած (հիպերբորօֆիացած) հայրենասիրութեամբ կուրացածները յոյսեր են դնում երկրորդ և երրորդ էակաբայի վրա և չեն տեսնում, որ այդ նաեւըր ուղարկված են Ռուսաստանի հմայքը փրկելու և ոչ թէ նրա տիրապետութիւնը չինական ջրերի վրա վերականգնելու համար: Իսկ առանց այդ տիրապետութեան Ռուսաստանի բոլոր յաղթութիւնները Մանջուրիայում—եթէ այդպիսիները տեղի ունենան—ապարդիւն կը լինին: Ամենալաւ դէպքում արշաւումը կործանարար է, որով գնդերով կուրացածները գարնանին սպանում է Եւրասիային, կը լինի անվերջ պատերազմ միայն պատերազմի համար, մի ամենաանբերիչ և ամենաարեւմտեցող պատերազմ յանուն ընդամենը (հատուցման), առանց գործնական հետեւանքների: Եւ որովհետեւ հասարակական կարծիքը Ռուսաստանում վճռապէս դէմ է այդպիսի պատերազմին, ուստի ժամանակ չէ որ Եւրոպան իր պատանակական ցաւակցութիւններէն գործի անցնէ: Արդեօք չէ հասել այն հոգեբանական քայլին, որի մասին ժողովը նորեք խօսում էր Ֆրանսիական պարլամենտին: Եւրոպայի պատերազմը պարլամենտները հարկադրել իրանց կառավարութիւնները ճշդուցնելու գործին պատերազմող կողմերի վրա յօգուտ խաղաղութեան շուտամտով վերականգնման: Եւրոպայի բոլոր ազգերը անպակի կորուստներ են կրում այս պատերազմից, ուստի ոչ միայն նիւթական, այլ և բարոյական իրաւունք ունեն պահանջել նրա դադարումը: Մեզ պընդում են շարունակ, որ ոչ մի միջամտութիւն կամ միջնորդութիւն հնարաւոր չէ, որովհետեւ երկու կողմերը ամենավճռական կերպով չեն ընդունում ոչ միջնորդութիւն, ոչ միջամտութիւն: Թող այդպէս լինէ: Բայց պարլամենտները կատարեալ հնարաւորութիւն ունեն պահանջել իրանց կառավարութիւններէն չէզոքութեան ամենալիստ պահպանութիւն, որը այժմ սխտանաւորաբար և յայտնի խախտվում է յօդուտ այս և այլ կողմի բոլոր պետութիւնների կողմէ: Թող միայն այդ կերպով չէ չէզոք պետութիւնները դադարեն հայթայթել պատերազմողներին փող, սղոյթները և անուս և պատերազմը ինքն իրան կը դադարէ, առանց ուղղակի միջամտութեան: Հասարակական կարծիքը Ռուսաստանում բոլորովին անզօր է, իսկ եւրոպայի կան ղեկավարման մասը մատին չի խփի յօդուտ խաղաղութեան: Մի այլ յօդուածով, որ տպված է Բերլինի «Tageb.» լրագրի մէջ, անելի վարդապետով նոյն միտքը, հոչակաւոր գործը խօսում է յանուն խաղաղութեան բարեկամների: Պատերազմը, ասում է նա, սոսկաբարձ, սուկալի բան է, իսկ ներկայ ռուս եսպոնական պատերազմը ևս առանել սուկալի է, որովհետեւ նրան ասպարէզ ծառայում է բոլորովին անմեղ չինական ժողովրդի չէզոք հողը: Բայց զրանից զուր ժողովուրդ, որ գործը վերաբերում է Ասիայում պատերազմող ազգերին, վնասվում են սնտեսապէս, ի հարկէ, ամբողջ աշխարհը, բոլոր պետութիւնները, մանաւանդ նրանք, որոնք ծովային խոշոր առևտուր են վարում:» (Вѣрж. Вѣд.)

Մ Ա Կ Ե Գ Օ Ն Ի Ս Յ Ո Ւ Մ

Բարձրագոյն Դուռը և Եւրոպի կառավարութիւնը գտնում են անվերջ պատերազմների մակեղծական ժամադրութիւնում օտար օֆիցերների թիւն անելանշարժ դէմ: Այդ օֆիցերների ներկայութիւնը թեւք կառավարութեան համար հաճելի չէ: Այսպէս թէ այնպէս դրանք հանդիսանում են մի անսակ անկախ իշխանութիւններ—գուրս թիւրքական ազգեցութիւնից: Իսկապէս դա առաջին քայլն է խելի Մակեդոնիան Բ. Դրան խախտում վարչութեան ձեռքից և դնել Եւրոպական կոնսոլիտիվ:

Հեռագրիներից ու լրագրական լուրերից յայտնի է մեր ընթերցողներին, թէ Բրնչիսի անօրինակ և սաստառական պատերազմներ կամ «Անանան» է գտնում թիւք կառավարութիւնը Միւրքայէզի դաշնագիրը ստորագրող երկու մեծ պետութիւնների պահանջների դէմ: Բայց առ այժմ ղեկավարման կանգ չէ առնում, նա շարունակում է զանազան առաջ տանել իր պահանջները:

Դիպլոմատիայի կարծիքով ժամադրմանի պահանջարկումը բաւական է Մակեդոնիան երջանկեցնելու և խաղաղեցնելու համար: Նոր օֆիցերներն արդէն դնացի և տեղ հա-

սել են, բայց արդեօք դրանով վերքը լաւացել է, արդեօք երկրի վիճակը դո՛ւն մազազափ փոխվել է:

Ահա այդ հարցին կը պատասխանեն հետեւեալ փաստերը:

Ջուժայի գայմագամ Սալի փաշան վճռում է կատարել մի շարք խուզարկութիւններ, որովհետեւ նկատում է զանազան խրտուճներ ազգաբնակչութեան մէջ:

Սուզարկութեան առաջին գո՛ւր գտնում են Սելիշէ, յետոյ Լագորաշը, յետոյ Գրոմադան, Պոկրոջիկը և ուրիշ շատերը: Սօֆիայի «ԱՊԵ» լրագրի թղթակիցը չէ յիշում, թէ խուզարկութեան ժամանակ ինչքն գտնվեցին, այլ պատմում է, որ բոլոր գիւղերից հաւաքեցին ականաւոր բոլորներին, մանաւանդ ուսուցիչներին, և յցրին բանտերը: Դպրոցները և եկեղեցիները կողոպտվեցին, թղթներ պատանոտվեցին, մի քանի տեղ դպրոցները դարձրել են գորանոց, իսկ Ջուժայի եկեղեցին կործանել են:

Նոյեմբերի վերջին Ջուժայում բանտարկված էին 200 հոգի զանազան երեւակայական քաղաքական յանցանքների համար:

Բանտարկեալները ենթարկվում են հազար տեսակ տանջանքների. երկուզների տակը խրում են անդրեր, գլխից վայր կախում, շեկացած երկաթներով գաղում են մարմինները, զանգերի շուրջը պարան փաթաթելով՝ ձգում ճնշում են, զիշերներով պահում են դուրսը, օստտիկ ցրտի մէջ և վրաները ջուր անում... Ամենախոշոր տանջանքները թափում են ուսուցիչները գլխին, իբրև «Կոմիսարի-բաշի-նետի»:

Ջուժայում գտնվող ժամադրմանի ֆրանսիացի օֆիցերը ձիգեր է թափում փոքր ինչ թեթեւեցնելու բանտարկեալների վիճակը, բայց հանդիպում է Սալի փաշայի եռանդուն դիմադրութեանը: Նրա և փաշայի միջև ընդհարում է առաջանում:

Մտադրութիւն կայ այդ բոլոր բանտարկեալներին ուղարկել Սէրէս և զինուորական դատաստանի ենթարկելու: Նրանք այլ ևս չեն կարող գնալ, ասում է «Р. Слово»-ի Սօֆիայի թղթակիցը, «Նրանց պէտք է բեռնել ջրերների և ձիերի վրա» և այնպէս տանել:

Վերևում յիշված ֆրանսիացի օֆիցերը ուզում է անձամբ գնալ կալանաւորներին այդ խմբի հետ, որպէս զի թոյլ չը տայ նրանց տանջելու ճանապարհով:

Այս հակադրական տոնապանքները միայն մի գայմագամի իշխանութեան մէջ չեն, նրանք ընդհանուր են, ամեն տեղ:

Բրիտանոնայ ժամադրմանը, ի հարկէ, որոշ օգուտ տալիս են, բայց նրանց տուած օգուտն չնչին է, միկրոսոպիական համեմատելով այդպէս դժխային վշտերի ու տառապանքների հետ:

Արդեօք ի՞նչ կը բերէ զարուն իր առաջին ծաղիկների հետ միասին:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍՏՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

19 դեկտեմբերի

10ԵՆՈՆ, 17 դեկտեմբերի: (Բէյտէր): Մուրթանի իրազէն Ազէնի այն կողմը գտնվող հոգի սահմանագծային հարցը կանոնաւորելու վերաբերմամբ այդ հարցի վերջնական լուծումն չէ ներկայացնում: Իրազէն սահմանում է միայն ժամանակաւոր դրութիւն, որը անհրաժեշտ է դարձնում ազգայն բանակցութիւնները:

10ԵՆՈՆ, 17 դեկտեմբերի: (Բէյտէր): Աւետրական նոր դաշնագրի ստորագրելը Միւս-Բերի-տանիայի և Ռուսաստանի միջև համարվում է որպէս յարաբերութիւնների բարելուում երկու երկրների միջև:

ՎԱՇՐԻՊՏՈՆ, 17 դեկտեմբերի: (Բէյտէր): Բուզլիկտ համոզեց Մակ Գործիկին պահպանել Պետերբուրգի դեսպանի պաշտօնը նոր կառավարութեան ժամանակ:

Կ. ՊՈԼՍ, 17 դեկտեմբերի: (Կորը. Բիւրօ): Սէլավոյբից յետոյ սուլթանը ունեկորութեան ընդունց դեսպան Զինովիէվին, որը ներկայ յարցին նրան առաջ նախկին զինուորական գործակալ գնդերալ Կալինին, որը ուրիշ պաշտօն է ստացել և նոր զինուորական գործակալ գնդապետ Ալէքսէիվին:

19 դեկտեմբերի

ՇԱՆԻՎԱՅ, 17 դեկտեմբերի: (Բէյտէր): Դատայ եռանդուն միջոցների է ձեռք առնում հեռանալու հնարաւորութիւնից զրկելու համար «Ասկորը» և «Գրօզօլոյ» նաւերին: Չինական կառավարութիւնը յանձնարարեց գաւտային պնդել ռուսական հիւպոտոսի առաջ

չինացուն սպանող նաւատիրին չինական իշխանութիւններին յանձնելու մասին, հակառակ դէպքում Ռուսաստանը դրանով կը ցոյց տար լուրջ դիտաւորութիւն խախտելու չէզոքութիւնը և Չինաստանը կարող չէր լինի պաշտպանել ռուսներին եսպոնացիներից չինական ջրերում:

ՏՕԿԻՕ, 18 դեկտեմբերի: (Բէյտէր): Տօգօն հրաժարվեց դիմաւորումից, որ մտադրութիւն ունէր անել նրան Տօկիօի մուսիցիպալիտետը, յայտնելով, որ դեռ ևս ժամանակը չէ հասել այդպիսի հանդէսների համար: Նա նուիրում է իր ժամանակը խորհրդակցութիւններին Իտո, Եմանտո, ԻՂուին և Սաիտօ ծովայեանների և ծովային շտաբի այլ պաշտօնեանների հետ ծովային պատերազմ վարելու պլանի վերաբերմամբ:

ՎԻԷՆԱ, 18 դեկտեմբերի: Երկրագործութեան մինիստրը կոմ Բուլօի տաղարկութիւն ստացաւ կայսրից կարէնէտի գլուխ կանգնել և առաջարկել մինիստրութեան վերականգնութեան նախագիծը:

ՀՈՒՄ, 17 դեկտեմբերի: Կառավարութիւնն ընդունց բաղանեան պետութիւնների առաջարկութիւնը առևտրական դաշնագրի ներկայացնելու մասին: Բանակցութիւններ կը վարվեն նախ և առաջ Բուսինիայի և Բոլգարիայի հետ և կը սկսվեն նրանք, երբի, յունվարի սկզբին (նոր տօմարով):

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ, 18 դեկտեմբերի: Դուժայի ժողովը, լսելով դեկտեմբերի 12 ի Բարձրագոյն ուղղութիւնը և ընդունելով նրա պատմական մեծ նշանակութիւնը, միաձայն որոշեց արկանել առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան Բուսովի Դօնի վրա երախտագէտ ազգաբնակչութեան հաւատարիմ հպատակութեան զգացմունքները:

19 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, «Правительственный Вѣстник» լրագրի հեռագրերը Սարբինից. «Դիրքերից եկած օֆիցերները վկայում են զօրքերի լաւ գրութեան մասին: Հիւզերում տար է, բոլորը տար են հազնված. ուստիով ապահովված են շարունակում են շինարարական դրադուները. արամադրութիւնը գուարթ է և հանգիստ. եսպոնացիների գերի ընկնելու դէպքերը շատանում են, առաջվայ յամառութիւնը չը կայ դիմադրութեան ժամանակ: Ներքին գործերի մինիստրը որոշեց նորից թոյլատրել «Сверный Край» լրագրի հրատարակութիւնը:

ՄՈՒԿԻՆ, 18 դեկտեմբերի: (Սեփ. թղթակցից): Դիրքերի վրա հանգիստ է: Ռուսաստանից դալիս են վազօններ Մանջուրիան տօների ընձանեցով: Չոր եղանակների շնորհիւ զօրքերի առողջութիւնը գերազանց է:

ՍՕՎՅՂՈՒՄ: (Բիւտցուտի գործակալութիւն): Բէլգիական և նիդերլանդական դեսպան կոմս Վրանդել նշանակված է Պետերբուրգի դեսպան: ՊՐՏ. ԱՌԻՍ, 18 դեկտեմբերի: (Բէյտէր): Լուրերի համեմատ, բաւական է սկզբուն պէտք է ճանապարհ ընկնի նաւահանգիստներից մէկից Մալանգից դէպի հիւսիս Մազազասկարում:

ՊՐՏ. ՍԱԻԴ, 18 դեկտեմբերի: (Բէյտէր): Դորքուօլթի կազմակերպչական պատրաստում է վերջին այստեղ անուխի, ուստիով պահպանել և բարձր ընդունց զինուորական ծառայողներին: ԲՕՄԲԵՑ, 18 դեկտեմբերի: (Բէյտէր): Պատժաւում սէլիերի կայացրած մեծ միտնգում ընդունվեց վճիռ, որը յայտնում է իր դժգոհութիւնը այն առիթով, որ սէլիերը նպաստում են ռուսներին Մանջուրիայում և ուրիշ տեղերում:

ՄՈՒԿԻՆ, 18 դեկտեմբերի: (Սեփ. թղթակցից): Պորտ-Արտուրի վրա եղած վերջին յարձակումները նորից յետ են մղված: Լուրերի համեմատ, կորէյական «Իլիէրն» ընկերութիւնը, որը նպաստ է ստանում եսպոնական զինուոր շտաբի, ձգտում է Ռուսաստանի կողմը կանգնել:

ՍՕՅԻԱ, 18 դեկտեմբերի: (Դիմադրական շրջաններից): Իշխանական ուղղով հաստատված է ժողովի վճիռը շարունակել ներկայ նստաշրջանը մինչև 1905 թի փետրվարի 1ը: Բիւրժուաները ընդունված են. դեկտեմբերի 20-ին պատգամաւորները ցրվում են արձակուրդով ծննդան տօների առիթով:

ՊՐԱԴՍ, 18 դեկտեմբերի: Ամբողջ Բօնէմիտով անցան ուրազանք, որոնք վրաններ պատճառեցին:

ՎԻԷՆԱ, 18 դեկտեմբերի: «Wiener Zeitung» լրագրում հրատարակված է կայսրի նամակը մինիստր-նախագահ Կերբերին, որի մէջ կայսրը յայտնում է նրան շնորհակալութիւն պարագանց ծառայութեան համար և ազատում

է Կերբերին մինիստր նախագահի պարտաւորութիւններից և ներքին գործերի ու արտարադատութեան մինիստրութիւնները կառավարելուց:

ՄՈՒԿԻՆ, 18 դեկտեմբերի: (Բիւտցուտ): Հիւսիսային-արևելեան գօրեղ փոթորիկը շատ վնաս պատճառեց հարաւային Շվեյցարիայում:

ՎԻԷՆԱ, 18 դեկտեմբերի: (Կորը. Բիւրօ): Կայսրը ունեկորութեան ընդունց բարձրագոյն հաշտագայտի նախագահ բարոն Կաուաշին: Տերեկով տեղի ունեցաւ Կերբերի հրաժարական և միտնաւանակ բարոն Կաուաշի մինիստր-նախագահ նշանակվելու Դիւտցուտից: Ներքին գործերի մինիստր նշանակված է Վերին-Աւստրիայի փոխարքայ կոմս Բիւրան-արէլը, արդարադատութեան մինիստրութեան կառավարիչ է նշանակված դէպարտամէնտի գերէկտօր Կլէյն: Մի փոքր ուշ կայացան մինիստրների խորհրդի երկու կարճատե նիւտեր: Նախ և առաջ Կերբերը հրաժեշտ տուց իր մինիստրութեան նախկին ընկերներին, իսկ յետոյ Կաուաշի ուղղունց նրանց և հրաւիրեց խորհրդակցութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Գինեթալ-Էլտինանտ Սախարովի հեռագրերը զլխաւոր շտաբին 1904 թի դեկտեմբերի 18-ից. «Դեկտեմբերի 17-ին Երեկոյեան մեր կառավարիչը յարձակում գործեցին եսպոնական պահակի վրա Չանլինպու գիւղի մօտ, որի ժամանակ կոտորեցին մի քանի եսպոնացիներին, իսկ մէկին գերի վերցրին»:

ՍՕՅԻԱ, 18 դեկտեմբերի: (Կորը. Բիւրօ): Գիշերը կայացած նիստում ժողովը ընդունց, դիմադրական կուսակցութեան սաստիկ դիմադրութիւնից յետոյ, իշխանական պայտալի պահպանութեան համար նշանակված գումարի 200,000 Ֆրանկով անելացումը:

ՄԻՆՍԿ, 19 դեկտեմբերի: Չինախան բուքի պատճառով գնացները շատ ուշ են գալիս, մի քանիսները ուշանում են տասը տասերկու ժամով: Սորթիլի կայսրանում տեղի ունեցաւ մարդատար գնացքի խորտակումն ուրիշ գնացքի հետ ընդհարվելու պատճառով: ԺԻՒՐԻՆՍԿ, Թագաւոր Կայսրը Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի հետ ժամանեց առաւօտեան 10 ժամին:

20 դեկտեմբերի

ՏՕԿԻՕ, 19 դեկտեմբերի: (Բէյտէր): Լօնդօնի եսպոնական միսիսայի ստացած հեռագրի համաձայն, եսպոնական պաշարող անապարտ Պորտ-Արտուրի մօտ գեղուցանում է, որ զօրքերը, թոյնելով Սուճուշան մարտիցի պատնէլը, շուտով գրաւեցին այդ մարտիցը առաւօտեան 10 ժամին: Ժամը 11-ին վերջնականապէս գրաւված էր ամբողջ մարտիցը: Ռուսական բերդապահ զօրքի մի մասը յետ նախաջեց այն բարձունքը ուղղութեամբ, որը գտնվում է մարտիցից դէպի հարաւ, իսկ միւս մասը ոչնչացաւ պայթիւնի ժամանակ տեղի ունեցած փլուծքի ժամանակ—Եսպոնական միսիսայի հաղորդած տեղեկութեան համեմատ, եսպոնական պաշարող բանակից Պորտ-Արտուրի մօտ գեղուցանում են, որ հողից հանված են երկու ուս օֆիցեր և անելի բան 160 զինուոր, որոնք փլուծքի տակ էին մնացել, նրանք գերի են վերցրված: Նրանց խօսքով էլ 150 ուստի փլուծքի տակ են մնացել պայթիւնի ժամանակ: Դեկտեմբերի 18-ին Երեկոյեան եսպոնական զօրաբաժինը Պօնուշանի արևելեան մարտիցի դէմ օղը թոյնեց բերդի հին պարպի մի մասը:

ՓՄԻՆԻՆԿԱ, 19 դեկտեմբերի: Թագաւոր Կայսրը ճանապարհ ընկաւ 11 ժամ 45 րօպէին:

ՓՄԻՆԻՆԿԱ, 19 դեկտեմբերի: Ժամանեց Թագաւոր Կայսրը Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի ուղեկցութեամբ: Մօտ 10 ժամին Կայսերական գնացքը մտնեցաւ շեղ գլադարված պալիլիոնին, որ հաւաքվեցին զինուորական հրամանատարներ, քաղաքացիական պաշտօնեաները և պատգամաւորութիւնները: Կիւլիլ զինուորական շրջանի զօրքերի հրամանատար Սուլթովիլովից բազմաւ ընդունելով, Թագաւոր Կայսրը մտնեցաւ պատգամաւորութիւններին, որոնք մատուցանում էին ազ ու հաց ու ողջուտում էին ճանքով պաշտելի Միսպիտին: Վերջացնելով ընդունելութիւնը, Թագաւոր Կայսրը և Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչ, ուղեկցված փառաւոր շքախմբով, ճանապարհ ընկան դէպի զօրքերի գնդակու տեղը: Գնդերի առկից անցնելուց յետոյ զօրքերը անցան հանդիսաւոր մարդով պատերազմական լիակատար համագիտով

